

21.04. 2026թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.04.2026թ. N 435-Ն որոշումը և **Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության** մատուցման համար Կողմերի միջև 16.10.2020թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:  
2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:  
2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, Համաձայնագրի հավելվածը կազմված է հինգ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի  
գործառնական վարչություն  
Հ/Հ 900011047678, 900011047686, 900011047892,  
900011047900, 900011048494, 900011048510,  
900011048361, 900011047918, 900011048635,  
900011048379, 900011048528

ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար



Վ. Հարությունյան


(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

«Հայնախագիծ» ԲԲԸ  
ք. Երևան, Չարենցի 1  
«Արդշինբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2470100038500000  
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն



Գ. Ազիզյան

(ստորագրություն)

Կ.Տ.









